

ԲԱՑԱՌԻԿ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՖՐԵԴԵՐԻԿ ՄԱԿԼԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆ ԿԱՏԱՐԱԾ ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԻՑ

Ֆրեդերիկ Մակլերը (1869-1937) թողել է հայագիտական վիթխարի ժառանգություն, որը վերաբերում է հայ ժողովրդի պատմությանը, հայ մատենագրությանն ու նոր գրականությանը, հայկական մշակույթին լայն առումով, ինչպես նաև հայոց լեզվին: Նա ֆրանսիացի այն մտավորականներից էր, որ տարբեր առիթներով խարազանել է երիտթուրքերի կազմակերպած 1915 թվականի հայակործան եղեռնը և պաշտպանել հայ ժողովրդի պատմական ու ազգային իրավունքները:

Նրա հայագիտական ժառանգության մեջ խիստ արժեքավոր է «Տեղեկագիր դեպի Ռուսահայաստան ու Թուրքահայաստան կատարած գիտական գործուղումից» (հուլիս-հոկտեմբեր 1909) գիրքը¹:

Այս ուղեգրական տեղեկությունները շարադրված են գիտական հիմնավորումներով և ներկայացնում են նրա հեղինակի գիտական բարեխղճությունը, որի հիմքում դրված են միայն իրական փաստերը, երբեմն նաև հեղինակի վիճելի վարկածները:

Ֆրեդերիկ Մակլերի գործուղումն իրականացվել է ֆրանսիական պետության հովանավորությամբ: Դա որոշակի երևում է «Տեղեկագրի» սկզբում զետեղված ընծայագրից, որը հետևյալն է.

«Monsieur le Ministre,

J'ai l'honneur de vous remettre le rapport contenant les résultats littéraire et scientifique de la mission que vous avez bien voulu me confier, en 1909, pour poursuivre en Arménie russe et en Arménie turque des recherches relatives à la langue et à la littérature arméniennes.

Veuillez agréer, Monsieur le Ministre, etc. Pgris, décembre 1909»².

(Պարո՛ն նախարար,

Պատիվ ունեմ Ձեզ ներկայացնելու տեղեկագիրը, որը պարունակում է

1 Frédéric Macler, Rapport sur une mission scientifique en Arménie Russe et en Arménie Turque (juillet-octobre 1909), Paris, Imprimerie nationale, 1911, 133 p.

2 Նույն տեղում, էջ 1:

1909-ին Ձեր կողմից ինձ վստահված առաքելության գրական ու գիտական արդյունքները, որոնց նպատակն է գիտական հետազոտություն կատարել Ռուսահայաստանի և Թուրքահայաստանի գրականության ու լեզվի վերաբերյալ:

Բարեհաճեցեք ընդունել, պարո՛ն նախարար, և այլն:

Փարիզ, 1909-ի դեկտեմբեր»):

Տեղեկագիրն սկսում է «Նախաբանով», ուր համառոտ ձևով ներկայացվում են Արդուլ Համիդի գահընկեց լինելը, երիտթուրքերի իշխանության գալը, 1909-ի ապրիլի Ադանայի հայկական կոտորածները:

Ահա այդ ժամանակահատվածից հետո է ինքն այցելել երկու Հայաստանները, եղել Էջմիածնում, տեսել բազմաթիվ քրիստոնեական ու հեթանոսական սրբավայրեր: Հատուկ այցելել է Զվարթնոցի տաճարը: Կոստանդնուպոլսում ուսումնասիրել է մի շարք հայկական ձեռագրեր: Եվ վերջապես, Մաղաքիա Օրմանյանը¹ Կոստանդնուպոլսի նախկին պատրիարքը, որը հայտնի է իր քաղաքական ու կրոնական նշանդրում գործունեությամբ, Ֆրեդերիկ Մակլերին վստահում է Ֆրանսիայում ֆրանսերեն լեզվով հրատարակելու իր հեղինակած «Հայոց եկեղեցու պատմությունը»²: Ֆրեդերիկ Մակլերի շնորհիվ, փաստորեն, Մաղաքիա Օրմանյանի գիրքը լույս է տեսնում Ֆրանսիայում ֆրանսերեն և դառնում է ազդակ, որ այն ունենա երկրորդ տպագրությունը հայերենով²:

Ֆրեդերիկ Մակլերի «Տեղեկագիրն» սկսվում է Վիեննայի հայկական գաղութի նկարագրով: Մեծ չէ այդ գաղութը՝ մոտ տասն ընտանիքներ, որոնց մի մասն առևտրականներ են, իսկ Գալիցիայից եկած մի քանի ընտանիքներ՝ կալվածատերեր: Համարյա բոլորը Գրիգորյան եկեղեցու հետևորդներ են, սակայն նշանավոր կրոնական տոներին այցելում են Մխիթարյան հայրերի եկեղեցին: Վիեննայում կան մոտ տասնհինգ հայ ուսանողներ, որոնք սովո-

1 Մաղաքիա Օրմանյանի վերոհիշյալ գիրքը հրատարակվել է Ֆրեդերիկ Մակլերի ջանքերով Փարիզում, 1910 թ.: Գրքի նախաբանի հեղինակն է Բերտրան Բարեյը, որը շատ բարձր է գնահատում Մաղաքիա Օրմանյանի կատարածը. «Այս պատմությունն ավելի կարևոր է դառնում այնու, որ հեղինակը՝ Օրմանյան սրբազանը, քնիկ արևելքի է և տասներկու տարի Կոստանդնուպոլսի պատրիարքական աթոռի վրա է նստած եղել: Հետևաբար ներկա աշխատությունը նման չէ այն սովորական, աննշան հրատարակություններին, որոնց հեղինակներն իրար ընդօրինակելով մեջտեղ են քերում: Բացի այդ, հեղինակը չի հետևում ոճի ու ձևի գեղեցկությանը, և նրա գիրքը միմիայն եղելությունների ու գաղափարների կոմպոզիցիոն պատկերացում է: Ընթերցողը պետք է տեսնի, թե որքան է այն ուղղամիտ, գրված է միայն համոզմունքի վրա հիմնված լինելով, ունի մտքի այնպիսի անկախություն, որ զարմանք է պատճառում եվրոպացի ընթերցողին» (տե՛ս Malachia Ormanian, L'Eglise Arménienne, son histoire, sa doctrine, son régime, sa discipline, sa liturgie, sa littérature, son présent, Paris, 1910, p. I-II).

2 Տե՛ս «Հայոց եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, քարեկարգութիւնը, արարողութիւնը, զրականութիւնը ու ներկայ կացութիւնը: Նախապէս զարդեղեմն հրատարակեց և հետո հայերենի վերածեց Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, նախկին պատրիարք, երկրորդ տպագրություն, Կոստանդնուպոլիս, 1912:

րում են բժշկություն ու բանասիրություն և գրեթե բոլորն էլ Ռուսաստանից են: Հիմնվել է «Աճի» միությունը, որն ամիսը մեկ անգամ օգնում է աղքատ ուսանողներին:

Մխիթարյանների միաբանությունը հաստատվել է 1810-ին Տրիեստում և հակառակ Նապոլեոն Բոնապարտի ցանկության՝ տարագրվել է Վիեննա, ուր ջերմ ընդունելություն է գտել թե արքայական ընտանիքի և թե Վիեննայի հոգևորականների կողմից:

Վիեննայի Մխիթարյան հայրերը հիմնականում զբաղվում են գիտությամբ, ունեն ծաղկուն տպարան և ժառանգավորաց հոգևոր դպրոց, ուր մոտ երեսուն աշակերտներ կան: Առավել երիտասարդ աշակերտները բաժանված են չորս դասարանների միջև և կրթություն են ստանում ավստրիական դպրոցների մամ: Սովորում են գերմաներեն, ֆրանսերեն, պարտադիր ձևով հունարեն ու լատիներեն, իսկ անգլերենն ու իտալերենը կամավոր (ֆակուլտատիվ) են: Երրորդ դասարանում սովորում են փիլիսոփայություն և կրոն: Չորրորդ դասարանում ծանոթանում են կրոնի վարդապետության և բարոյագիտության հետ: Հետո Մակլերը խոսում է Վիեննայի Մխիթարյանների ներքին կրոնական կարգ ու կանոնի մասին, նկարագրում է Միաբանության թանգարանը, ուր կա հայկական դրամների գեղեցիկ մի հավաքածու, խոսում է հունարեն արձանագրություն ունեցող քարե մի կոթողի մասին, որը պահվում է նույն թանգարանում¹:

Հայագետն առանձնացրած ներկայացնում է Վիեննայի Մխիթարյան միաբանության մեջ պահվող մի շարք ձեռագրեր, բերում դրանց հիշատակարանները՝ գրաբար և իր կողմից կատարված ֆրանսերեն թարգմանությամբ: Նա նաև նշում է, որ 1895-ին Հակոբոս Տաշյանը հայերեն ու գերմաներեն լեզուներով հրատարակել է Վիեննայի Մխիթարյան միաբանության ձեռագրացուցակը, որը նկարագրում է 572 ձեռագիր: Դրանից հետո ձեռագրական հավաքածուն հարստացել է ևս 300 նոր ձեռագրերով, որոնց ձեռագրացուցակը հրատարակվել է ավելի ուշ: Այդ բոլոր ձեռագրերը Ֆրեդերիկ Մակլերն ունեցել է իր ձեռքի տակ և դրանց մի մասի հիշատակարանները ներկայացնում է տողատակերում՝ հարուստ ծանոթագրություններ տալով դրանցում եղած տեղանունների և անձնանունների վերաբերյալ:

Ֆրեդերիկ Մակլերը մանրամասն նկարագրում է այն ձեռագրերը, որոնք ներկայացված են «Տեղեկագրում»: Օրինակ, Վիեննայի թիվ 682 ձեռագիրը «Ժամագիրք է» (livre d'heures), մագաղաթից, ձեռագիրը՝ բոլորգիր, 182 թերթ՝ երկար տողերով:

Տառերը նկարագարող, սկզբնատառերը գույնզգույն, ոսկեզարդ և թռչնա-

1 Ֆ. Մակլերը գրում գետեղել է այդ հունական կոթողի ֆոտոնկարը (տե՛ս Rapport sur une mission scientifique..., p. 4):

պատկերներով, լուսանցազարդերով, որոնք ոսկեպատ են և գույնզգույն՝ ծաղիկների ձևերով ամեն հատվածի սկզբում: Հետո ներկայացվում է առանձին թերթերի վրա եղած մանրանկարների բովանդակությունը՝

Թերթ՝ 2 ր - գույնզգույն, ոսկեպատ մանրանկար, որը ներկայացնում է խաչի առջև աղոթող մի ծերունու՝ գիրքը ձեռքին, նրա գլխի հետևում սև սատաճա՝ պոչով, թևերով, չորս ոտքերով ու եղջյուրներով:

Թերթ՝ 7 ր - նույնատիպ մանրանկար, ներկայացնում է կրոնական զգեստներով մի եպիսկոպոսի, որը խաչ է կրում՝ ձախ ձեռքին բռնած է գիրքը:

Թերթ՝ 35 ա - սուրբ Մատթեոսը՝ նստած՝ ձեռքին բռնած գույնզգույն ու ոսկեպատ Ավետարան:

Թերթ՝ 36 ա - Ներսես Շնորհալիճ՝ ձեռքին մի գիրք:

Թերթ՝ 47 ա - Դավիթ մարգարեն՝ ձեռքին մագաղաթ, կրոնական զգեստներով՝ նախորդ մանրանկարի ոճով:

Թերթ՝ 52 ա - լուսանցքում սուրբ Կույս Մարիամն է՝ ձեռքերը տարածած:

Թերթ՝ 59 ա - լուսանցքում՝ ձեթ տանող երկու կանայք:

Թերթ՝ 97 ր - Դավիթ մարգարեն կրոնավորի հագուստով, մարգարեություններ ունեցող մագաղաթով:

Թերթ՝ 120 ր - մի ծեր եպիսկոպոս՝ կրոնավորի հագուստով, ձեռքին մի գիրք:

Թերթ՝ 128 ա - լուսանցքում ծնկի իջած թագադիր մի թագավոր (Մասնակ):

Թերթ՝ 170 ր - Ներսես Շնորհալիճ (le Gracieux)՝ ձեռքին մի գիրք:

Ֆրեդերիկ Մակլերը նշում է, թե ձեռագրի լուսանցազարդերը և մանրանկար սկզբնատառերը ստեղծված են ժարտար ձեռքով. նման մանրանկարներ կարելի է տեսնել Հ. Տաշյանի ձեռագրացուցակի վերջում (նկ. IV և V)¹:

Վիեննայից հայազետը մեկնում է ուղիղ էջմիածին: Ճանապարհը գնացքով անցնում է Տագանրոգով, Ռոստովով (Դոնի վրա), Դերբենտով, Բաքվով, Թիֆլիսով ու Ալեքսանդրապոլով: Էջմիածնում նրան հետաքրքրում են հատկապես հնագույն Ավետարանների ձեռագրերը: Վեհափառ հայրապետ Մատթեոս Երկրորդը² սիրով իրավունք է տալիս օգտվել էջմիածնի Մայր աթոռի ձեռագ-

1 Frédéric Macler, Rapport sur une mission scientifique ... p 17.

2 Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցին Ամենայն Հայոց կաթողիկոս է եղել 1908-1910 թթ.: XIX դարի վերջերի հայկական կոտորածների ժամանակ դատապարտել է սուլթանական կառավարության քաղաքականությունը և պայքարել Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու համար: Իր համարձակ վարքագծի համար ստացել է «Երկաթե պատրիարք» անվանումը: Իր կաթողիկոսության երկու տարիների ընթացքում բարեկարգել է թեմական գործերը, նպաստել ուսումնական գործի կանոնավորմանը, բարեկարգել է Մայր Աթոռի տնտեսական վիճակը (տե՛ս Ամենայն Հայոց կաթողիկոսներ, խմբագրությամբ՝ Պետրոս Հովհաննիսյանի, Երևան, 2001, էջ 256):

րատնից, իսկ եպիսկոպոս Մեսրոպ Տեր-Մովսեսյանը օգնում է լուսանկարելու Էջմիածնի ամենաճանապարհորդ Ավետարանը՝ ձեռագիր թիվ 229-ը: Միաժամանակ հայագետին հետաքրքրում է Հայաստանում քրիստոնեության մուտքի պատմությունը, և վանքի գիտնական Գալուստ Տեր-Մկրտչյանն օգնում է պատկերացում կազմելու Հայաստանում քրիստոնեության մուտքի առավել վաղ շրջանի վերաբերյալ: Նա հիացմունքով է խոսում Գալուստ Տեր-Մկրտչյանի գիտական կարողությունների և աշխատությունների մասին: Հիշատակում է նաև Երվանդ Տեր-Մինասյանի «Die armenische Kirche in ihren Beziehungen zu den syrischen Kircher, Leipzig, 1904»¹ և Նիկողայոս Ադոնցի «Армения в эпоху Юстиниана», СПб, 1908² գրքերը:

Հայագետը խոսում է Գրիգոր Լուսավորչից առաջ քրիստոնեությունը Հայաստան ներթափանցելու մասին:

Ֆ. Մակելրի կարծիքով Հայաստանում քրիստոնեությունը տարածելու գործում մեծ դեր է կատարել Աղբիանոս եպիսկոպոսը, որին Փավստոս Բուզանդը և Ագաթանգեղոսը մեծ դեր են հատկացնում³: Հայագետը համաձայն է Երվանդ Տեր-Մինասյանի ու Նիկողայոս Ադոնցի այն կարծիքներին, ըստ որոնց հայ եկեղեցին հենց սկզբից էլ կամեցել է ունենալ **«ազգային հոգևոր անկախություն»**.

«Հայոց եկեղեցու պատմությունը 4-րդ և 5-րդ դարերում ասորական և հուսանական ազդեցությունների շնորհիվ առաջ եկած կուսակցությունների կռիվ է, մի անընդհատ, փոփոխվող հաջողությամբ վարած մենամարտ, որի ժամանակ **Հայոց ազգային կուսակցությունը միացած է ասորական ազդեցության**

1 Տե՛ս նաև Ե.Գ. Տեր-Մինասյան, Պատմա-բանասիրական հետազոտություններ, Երևան, 1971, էջ 31, 210 և այլն:

2 Տե՛ս հայերեն հրատարակությունը՝ Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987:

3 «Որ յաստիժան եպիսկոպոսութեան լինէին արժանի կալոյ, առեալ ձեռնադրութիւն ի մնանէ, որոց առաջնոյն՝ Աղբիանոս անուն, որ ապա կողմանցն Եփրատական գետոյն լինէր վերակացու...: Եւ զԱղբիանոս զայր ծմբարիտ և աստվածասէր՝ վերակացու թողոյր արքունական դրան բանակին (տե՛ս Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, Երևան, 1983, էջ 470): «Ապա առաքեցին թագաւորն Խոսրով և մեծ եպիսկոպոսապետն Վրթանէս զպատուական զմեծ եպիսկոպոսն Աղբիանոս ի մէջ նոցա երանելին Աղբիանոս, զնոսա ուղղել նուաճել՝ ընդ միմեանս հաշտեցուցանել: Անարգեցին զմա, և ոչ լուան բարեխօսութեանն եկելոյն. անգոսնեցին զյղելիսն, և մեծաւ թշնամացօք արծակեցին զեպիսկոպոսն, և առնուին աւերիւն գտունն արքունի: Եւ ետ գաւանն և զբուն գահոյից գետըն մահապետին Մանաւազեմից եպիսկոպոսին Աղբիանոսի յեկեղեցի. զՄանաւազակերտ ամենայն սահմանօքն և գաւառական հանդերձ, որ շուրջ զնոցօք էր, որ կայ ի կողմանս գետոյն Եփրատայ» (տե՛ս Փավստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Բնագիրը Զ. Պատկանյանի, Երևան, 1987, էջ 18): «Հուսիկի մասին, որ Աղբիանոս եպիսկոպոսի տոհմից էր, և որին Պապ թագավորը Ներսեսի փոխանակ նշանակեց իր կամքով առանց Կեսարիայի մեծ եպիսկոպոսապետի, որի պատժառով այնուհետև Հայոց կաթողիկոսների եպիսկոպոս ձեռնադրելու իշխանությունը դադարեց» (տե՛ս Նույն տեղում, էջ 345):

ներկայացուցիչների հետ և աշխատում է, Պարսից պետական քաղաքականության օժանդակությամբ, ազատ կացուցանել Հայաստանը հելլենական ազդեցությունից, մի անկախ ազգային եկեղեցական կազմակերպություն ստեղծել միանգամայն մերժելով Կեսարիայի գերիշխանական ձգտումները՝ միջամտելու Հայոց եկեղեցական կյանքի մեջ»։ «Այս նույն միտքը,- շարունակում է Ե. Տեր-Մինասյանը,- մեզանից հետո արտահայտել է Ն. Ադունը հետևյալ բառերով. «... Главы церкви сменялись сообразно с политическими веяниями. Григорида выступают сторонниками американской политики, а Албаниды сочувствуют больше персидской... Политика Албанидов была политикой Аршакидов по преимуществу и сделалась национальный, легши в основание организации армянской церкви»¹.

Ֆ. Մակլերը համակիր է Գալուստ Տեր-Մկրտչյանի անտիպ այն կարծիքին, թե սուրբ Սանդուխտի և սուրբ Թադեոսի լեգենդները հայկական եկեղեցի են ներթափանցել հարավից, իսկ Գրիգոր Լուսավորչի եկեղեցին հունական ծագում ունի, այն գալիս է Կեսարիայից։ Գրիգոր Լուսավորիչը Բարձր Հայքի քարոզիչն էր, նրա ողջ կյանքն ու գործերն ընթացել են Էրզրումում և ոչ Էջմիածնում։ Հռիփսիմյան կույսերի լեգենդն այլ կերպ է հորինվել։ Նա այս հարցերի առիթով հղում է Նիկողայոս Մառի տեսակետը։ Սրանք տեսակետներ են, որոնք հայազետն արտահայտել է վարկածի ձևով։ Նա նույնիսկ կարծիք է հայտնում, թե այդ ժամանակահատվածի բոլոր պատմիչները, դժբախտաբար, պատկանում էին նույն դպրոցին, նրանք բոլորն էլ Սահակ Պարթևի աշակերտներն էին և ներկայացնում էին Գրիգոր Լուսավորչի տան և հունական եկեղեցու շահերը։ Աղբիանոսի դպրոցին պատկանողներից ոչ մի տեղեկություն չկա»²։ Մակլերը նշում է, որ հինգերորդ դարում Վաղարշապատի եկեղեցին դառնում է հայկական եկեղեցու կենտրոնը և Հռիփսիմեի լեգենդը կապվում է Վաղարշապատի հետ։ Գրիգոր Լուսավորչի դերը կամաց-կամաց աճում է, սա է պատճառը, որ VII դարում նրա անունով Վաղարշապատի հարթավայրում կառուցվում է եկեղեցի. այն Չվարթոնոց (հրեշտակների տուն) կամ Գրիգոր Լուսավորչի տաճարն է։ Ֆ. Մակլերը նույնիսկ Մաշտոցին է վերագրում Ագաթանգեղոսի երկը, որն իբրև ձևափոխվել է տարիների ընթացքում ու նպաստել սուրբ Գրիգորի պաշտամունքի մեծամասնումը³։

Հայազետն արտահայտում է այն վարկածը, ըստ որի Աղբիանոսի հին եկեղեցին Տարոնում է ունեցել իր կենտրոնը, իսկ Էջմիածինը դարձել է Գրիգոր Լուսավորչի և հայ թագավորության կենտրոնը⁴։

1 Ե. Գ. Տեր-Մինասյան, Պատմա-քաղաքական հետազոտություններ, էջ 211։

2 Frédéric Macler, Rapport sur une mission scientifique ... p. 22.

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում, էջ 23։

Ավելի առաջ տանելով իր վարկածը՝ Ֆ. Մակլերը Դանիել եպիսկոպոսին, որի մոտ իբրև եղել են հայկական նշանագրերը, կապում է Աղբիանոսի եկեղեցու հետ: Նա ասում է, որ հնարավոր չէ՝ պարզել արդյոք դանիելյան նշանագրերով եղել են սուրբ գրքից որոշ թարգմանություններ թե՛ ոչ ու ենթադրում է, թե եկեղեցու արարողության համար գուցե թարգմանվել էին ավետարանիչներն ու սաղմոսները¹:

Մակլերը նկատում է, որ հինգերորդ դարասկզբին Հայաստանի տարածքի մեծ մասը գտնվում էր պարսկական ազդեցության ոլորտում, դրա համար էլ եկեղեցական լեզու էր ծանաչվում և օգտագործվում ասորերենը, այդ պատճառով ուսանողներն այցելում էին Հայաստանի հարավում գտնվող կենտրոնները՝ Եդեսիա, Նիկիա և այլն:

Հայագետի կարծիքով, ինչպես հաղորդում է Կորյուն վարդապետը, Աստվածաշնչի թարգմանությունն սկզբում ձեպով իրականացվեց ասորերենից, հետո այն փոփոխվել է ըստ հունական օրինակների, որոնք բերվեցին Կոստանդնուպոլսից՝ 431 կամ 432 թվականներին: Եղել է նաև Աստվածաշնչի երրորդ թարգմանական փորձը, որն ամենաճշգրիտն է ու իրականացվել է Կոստանդնուպոլսի ու Ալեքսանդրիայի հայ ուսանողների կողմից, որոնք դժգոհ էին սուրբ Սահակի ու սուրբ Մեսրոպի թարգմանությունից²: Նման եզրակացության հիմքը Ֆ. Մակլերի համար Գալուստ Տեր-Մկրտչյանի Տիմոթեոս Կուզի հակաժառուրյունը գրքի առաջաբանն է, որում Էջմիածնի միաբանը ներկայացնում է հակաքաղկեդոնական այդ գրվածքի նշանակությունը հայ դավանաբանական գրականության ու մատենագրության զարգացման գործում: Էջմիածնի միաբանության անդամի կարծիքով Տիմոթեոսի գիրքը թարգմանվել է VI դարի կեսերին ու «հայոց գրականության պատմության և լեզվի տեսակետից էլ մեծ հետաքրքրություն է ներկայացնում ներկա հրատարակությունը: Սրանով պարզվում է վերջնականապես, թե որչափ անհիմն է այն հայացքը, իբր թե 2 դարն անպատուղ է եղել հայոց գրականության համար. մենք տեսնում ենք, որ ընդհակառակն մեր եկեղեցական գրականության ամենահարուստ ժյուղերից մեկը՝ դավանաբանականը, հենց այդ դարում է ստեղծվել»³:

1 Frédéric Macler, Rapport sur une mission scientifique ... p. 23.

2 Նույն տեղում, էջ 24:

3 Տե՛ս Տիմոթեոս եպիսկոպոսապետ Աղեքսանդրեա, Հակաժառուրյուն առ սահմանեալս ի ժողովոյն Քաղկեդոնի, ի լոյս ընծայեալ աշխատութեամբ Կարապետ Ծ. վարդապետի և Երուանդ վարդապետի, Ա. Էջմիածին, 1908, էջ XXX-XXXI, Տիմոթեոս Կուզի «Հակաժառուրյուն» գիրքը հայ եկեղեցու դեմքերի համար դառնում է ծշմարիտ հավատի քանալի: Կիրակոս Գանձակեցին դրա մասին գրում է. «Յայտրիկ ատուրս պայծառանայր սուրբն Սիմէոն Սիւնական յԱղեքսանդրիա, և Տիմոթէոս երեք՝ ուղիղ հաւատով իմաստասէր, որ զամեն արուեստ գիրսն գրեաց՝ հաւաքեալ զամենայն բանս աստուածայնոց արանց ընդդէմ ամենայն հերժուածողաց» (տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Աշխատասիրությամբ Ա. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 37):

Հայագետը կարծում է, որ եթե Աստվածաշնչի ասորական ու գրաբարյան բնագրերի մեջ կան ինչ-որ տարբերություններ, ապա պետք է հիշել, որ այն գալիս է հունական բնագրի հետ ուղղելուց: Գիտնականը նաև իրավացիորեն նկատում է, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը հինգերորդ դարում ավարտված չի կրելի համարել: Հետագայում ևս այդ թարգմանական բնագրի վրա կատարվել են որոշ փոփոխություններ: Օրինակ, Կիլիկյան Հայաստանի Հեթում թագավորը (1224-1270) Ավետարանի հայերեն բնագրի մեջ մտցրել է փոփոխություններ՝ ըստ Սուրբ գրքի լատիներեն թարգմանության:

Նա բերում է էջմիածնի մատենադարանում պահպանվող 7 ավետարանների այն էջերը, որոնք ունեն տարբերություններ:

A = էջմիածին 23 (շեղում, էջ 37 և հաջորդ)

B = էջմիածին 363 (շեղում, էջ 40 և հաջորդ)

C = էջմիածին 362 (շեղում, էջ 41 և հաջորդ)

D = էջմիածին 369 (շեղում, էջ 45 և հաջորդ)

E = էջմիածին 260 (շեղում, էջ 50 և հաջորդ)

F = էջմիածին 257 (շեղում, էջ 59 և հաջորդ)

E = էջմիածին 229 (շեղում, էջ 27 և հաջորդ)

Ֆ. Մակկերն Աստվածաշնչի հայերեն թարգմանության վերաբերյալ հանգում է հետևյալ եզրակացությունների՝

ա) Հայերեն Ավետարանը թարգմանվել է շատ հին ասորական բնագրից:

բ) Այդ տարբերակը ստուգվել է հունարեն բնագրով Սահակի և Մեսրոպի կողմից:

գ) Այն ստուգվել է երկրորդ անգամ 432 թվականից հետո՝ Կոստանդնուպոլսից բերված հունական ձեռագրերով:

դ) Այն ստուգվել է երրորդ անգամ՝ VI դարում, հունաբան դպրոցի ներկայացուցիչների կողմից:

Մակկերը բերում է 989 թվականին գրված էջմիածնի թիվ 229 ձեռագրի հիշատակարանը.

1 Յանուս Աստծո ևս տիր տիկին (?) աղախին (Քրիստոսի)

2 միաբանեցայ սուրբ նախավկայիս այլզի (?)

3 ևս տիկնաց աղախին Քրիստոսի միաբանեցայ

4 նախավկայիս յայս աւրէ ի հետ զինչ մեր

5 կարողութիւն լինի ծառայութիւն ամն

6 եմք սրբոցս գրեցաւ յիշատակ:

1 Frédéric Macler, Rapport sur une mission scientifique ... p. 25.

2 Նույն տեղում, էջ 27: Գրաբարյան կրճատումները վերականգնել ենք - Ա. Դ.:

TRADUCTION - ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

1 Au nom de Dieu, moi Tirtikin (?), servante [du Christ]

2 Je suis devenue membre de la communauté de ce saint protomartyr...

3 Moi, Tiknats, servante du Christ, je suis devenu membre

4 de ce protomartyr, à partir de ce jour, tant que nous

5 le pourrons, nous assurerons le service à

6 ces saints.- Fut écrit en mémorial¹.

Մակլերը նկատում է, որ հիշատակարանի առաջին տողի տիր բառը դժվար է կարդացվում: Կարելի է մտածել, թե այն Տիրամայր բառն է: Հիշատակարանի 6-րդ տողում կա «ces saints» բառերը («սրբոց»): Ամեն մի հայկական եկեղեցում կա երեք խորան՝ դրանցից կենտրոնականը նվիրված է Աստծուն կամ երրորդությանը, իսկ մյուս երկուսը՝ սրբերին²:

Բոլոր ներկայացված ձեռագրերը Ֆ. Մակլերը մանրամասն նկարագրում է: Ահա դրանցից մեկը.

Էջմիածնի ձեռագիր 236 (1045 թ.)

Չորս Ավետարաններ: Մագաղաթ: 244 թերթեր երկու սյունակներով, տառերը խոշոր երկաթագիր: 34 x 28 սանտիմետր: Թիֆլիսի Կարապետ արքեպիսկոպոսի հավաքածուից: 243-րդ էջում կա գրություն՝ *Կանցի Այվազ*, որը վերանորոգել է ձեռագիրը: Կանը Էրզրումի մոտ գտնվող գյուղերից է: Կարապետ արքեպիսկոպոսը եղել է Էրզրումում, մա առաջնորդն էր այն արտագաղթող հայերի, ովքեր 1830-ին Թուրքիայից անցան Ռուսաստան:

Այս ձեռագիրը բերվել է Էրզրումից (Կան) Ախալցխես, որը կառավարվում էր Թիֆլիսից: Կարապետ արքեպիսկոպոսի մահից հետո անցել է Էջմիածնի գրադարանին:

Հատորի սկզբում կան մի շարք տարրական նկարներ՝

1) Հիսուսի մուտքը Երուսաղեմ Ծաղկազարդի օրը:

2) Տերունական ընթրիք, սեղանի վրա մի ձուկ:

3) Գերեզման դնելը:

4) Չորս ավետարանիչները³:

Հատորի վերջում շատ հին երկաթագրով հատվածներ են Ղուկասի Ավետարանից:

1 Փառք ամենասուրբ երրոր-

2 դութեանն ի բարձունս

3 յաւետեանս (sic) ամէն

4 Գրեցաւ չորեքվտակեան

1 Frédéric Macler, Rapport sur une mission scientifique..., էջ 28:

2 Նույն տեղում, էջ 29:

3 Նույն տեղում, էջ 37:

5 տառս այս ձեռամբ
 6 Յուսկան մեղաւոր եւ
 7 անարժան քահանայի եւ
 8 յետ [կ]իմ¹ (sic) գրչի: ի կաթո-
 9 ղիկոսութեանն տեառն
 10 Պետրոս Հայոց վերադիտ-
 11 ողի ի թուականութեանն
 12 Հայոց մղդ ստացող
 13 սրբոյ աւետարանիս յաղաւ-
 14 թս յիշեսցիք:

TRADUCTION

Gloire à la très sainte Trinité, en haut, à jamais. Amen. Fut copiée cette écriture à quatre ruisseaux, par la main de Yusik, pécheur et prêtre indigne et dernier scribe; sous le catholicat de Têr Petros, le surveillant des Arméniens (=le patriarche), en l'an 494 E.A. (=1045 de J.-C.). Rappelez [-moi] dans [vos] prières, ô acquéreur de ce saint Évangile².

Ֆ. Մակլերը ծանոթագրում է հիշատակարաններում եղած անձնանուններն ու տեղանունները: Այս հիշատակարանում կա Պետրոս Գետադարձի անունը, որի մասին հայագետը գրում է. «Կաթողիկոս Պետրոս Առաջինը (1019-1054) նստել է մի շարք վայրերում՝ Սեբաստիայում, Անիում, Ձորավանքում, Արծնում, Սեբաստիայի մոտ գտնվող Սուրբ Նշան եկեղեցում, ուր և վախճանվել է: Նա կոչվել է Գետադարձ («tumeur de rivière») հետևյալ իրադարձության առիթով: Երբ կայսր Վասիլ Երկրորդը ձմեռում է Տրապիզոնում (Chaldée Pontique), Պետրոսն ուղարկվում է նրա մոտ՝ որպես Հովհաննես թագավորի դեսպան, Վասիլը հրավիրում է նրան հունական արքունիքի մեծերի ու հոգևորականության ներկայությամբ հայկական ծեսով ջրօրհնեքը կատարելու: Այն պահին, երբ Պետրոսը խաչը մտցնում է ջրի մեջ, ջրերը հանկարծակի կանգ են առնում, և երբ նա մեռոնն է լցնում, լույսի ժառագայթները փայլատակում են բոլորի աչքերին³:

Էջմիածնի թիվ 369 ձեռագիրը գրվել է 1066 թվականին: Մակլերը մեջբերում է նրա հիշատակարանը.

1 շ: Ժ: Ե: թուոյս հայոց շրջագայիս.

2 Ես գրիգոր քահանայ՝ ի նուաղել ազգիս հայոց ի

1 Պետք է լինի յետին - Ա.Դ.:

2 Նույն տեղում, էջ 38:

3 Նույն տեղում, էջ 38-39: Ֆ. Մակլերն ավելացնում է, որ այս հրաշքի մասին պատմում են Արիստակես Լաստիվերցին, Մատթեոս Ուռհայեցին, Վարդանը, Կիրակոս Գանձակեցին և ուրիշներ: Այդ մասին ծանոթագրություններ ունի նաև Էդուարդ Դյուլորիեն իր «Recueil des historiens des croisades. Documents arméniens, Paris, 1869, t. I, p. 414».

3 ժամանակի հալածանաց մերոց յազգէն իսմայե-
 4 ի՝ սահեալք ի կողմանց արեւելից ի լերանցն Այր
 5 արատա՝ ի գեղջէն որ կոչի՝ Արկումի՝ զկնի
 6 աստուածասէր թագաւորին մերոյ սենեքերեմայ՝ եկ-
 7 եալ բնակեցաք ի քաղաքիս Սեբաստիա, ուր քառա-
 8 սուն վկայքն հեղին զարիւնս իրեանց՝ մարտ ե-
 9 դեալ ընդ ատոյ դառնաշունչ՝ եւ ընդ սառա-
 10 մանեաց ջրոյ՝ եւ անդէն զկնի ամաց հնգից
 11 վախճանէր բազմաշնորհ եւ մեծապատիւ հայրն
 12 իմ Անանիա քահանա ի թագաւորական քաղա-
 13 քին ի բիւզանդիոն զ..... եւ մնաց-
 14 եալ եղաք երկու եղբարքս Գեորգ եւ Գրիգոր՝
 15 ի մանգական տիս՝ աշակերտեցաք առ ոտս երա-
 16 նելի տեառն փիլիպպոսի՝ եւ որդւոց իւրոց Ստե-
 17 փաննոսի և Սահակա՝ եւ ըստ սովորական
 18 բարեմտութեան իւրեանց եղեն սնուցիչք
 19 և ուսուցիչք մեր յոյժ բարերար կամաւք¹:

Հիշատակարանին կցված ծանոթագրություններում խոսում է Ակոռի գյուղի մասին: Նա ասում է, որ Ակոռի գյուղի մասին գրույցը լսել է 1909-ի օգոստոս ամսին: Սա հնում եղել է Արարատի ստորոտում գտնվող գյուղ. այն կործանվել է 1840-ի երկրաշարժի ժամանակ: Ակոռի գյուղի մոտ եղել է մի փոքրիկ վանք՝ նվիրված սուրբ Հակոբին: Այդ վայրում կա նաև մի թռչուն, որը կոչվում է սուրբ Հակոբի թռչուն: Վանքի կողքին՝ Արարատի ստորոտի մի մեծ պատռվածքից, բխում է մի փոքրիկ աղբյուր՝ կոչված «Մշտաբուխ»՝ այն շատ պաշտված է ողջ շրջապատում քրիստոնյաների, թաթարների ու թուրքերի կողմից: Հավատում էին, որ հենց ով տանի այդ ջուրը, մորեխ ուտող թռչունները հետևում են նրան: Եվ երբ սկսվում է մորեխի համաճարակը, պետք է զնալ այդ ջուրը բերելու²:

Էջմիածնի թիվ 260 ձեռագրի 267-268 թերթերի հիշատակարանները պատմում են, թե ինչ շքեղ գույներով ու ծաղիկներով է զարդարվել Ավետարանը.

Բայց նորոգեցաւ սուրբ

Ավետարանս՝ ի թուականիս հայոց: ըկք: Հրամանաւ պատուական եւ աստուծասէր պատրոնին Ալէքսին, որ բազում փափագանաւք սրտի իւրոյ ետ նորոգել զսուրբ կտակս: Եւ զարդարեաց ծաղկազարդ երանկաւք, ոսկով պատուականաւ. եւ գոյնսգունեան վայելչական դեղովք:

Ի յիշատակ ոգւոյ իւրոյ Հաւր իւրոյ, եւ ծննաւդաց իւրոց:

Վարդանայ եւ մար իւրոյ շնմբադին: Եւ գեղեցիկ եւ Անդրանիկ պատանե-

1 Frédéric Macier, Rapport sur une mission scientifique ... p. 46.

2 Նույն տեղում, էջ 46-47:

կի իւրոյ մըխիթարչին, որ է յիշատակ և ժառանգ ամենայնի: Չոր տէր Յիսուսս աղաւթիք սրբոցն ընդ երկայն աւուրս պահեսցէ: Ամէն:

Արդ աղերս մաղթանաց արկանեմք առաջի մանկանց մոր Սիովնի յիշելի միագումար եւ ի սրաթոխչ աղաւթս ձեր զվերագրեալսդ ամենայն: Որոց ողորմեսցի սոցա քո յաւուր մեծի ծագման իւրոյ, յորժամ բանք սպառնն և գործք թագաւորեն¹:

Ֆ. Մակլերի «Տեղեկագրի» 66-ից 75 էջերի միջև առկա են էջմիածնի վանքի լատիներեն արձանագրութիւնը, էջմիածնի վանքի գրադարանի ու պարսպի սուրբ Հռիփսիմն տաճարի նկարները: Նաև Գայանն, Մուղնի, Սաղմոսավանք, Հովհաննավանք եկեղեցիների, ինչպես նաև Չվարթնոց տաճարի նկարները:

Գրքում առաձին «Չվարթնոց» խորագրի տակ ներկայացվում է այդ տաճարը²:

Ֆ. Մակլերն ասում է, որ Հայ ժողովուրդը համարում է իր մեծագույն սրբությունը Արարատի ստորոտի մոտ գտնվող հինգ եկեղեցիները կամ տաճարները, որոնք գտնվում են էջմիածնի շրջակայքում: Դրանք են՝ էջմիածնի Մայր տաճարը, սուրբ Հռիփսիմեն, սուրբ Գայանեն, Շողակաթը ու Չվարթնոցը: Առաջին չորս տաճարները կանգուն են ու լավ պահպանված, նաև շնորհիվ դարերի ընթացքում նրանց վերականգնողական աշխատանքների, իսկ Չվարթնոցը շքեղ ավերակների հավաքածու է: Չվարթնոցի վերաբերյալ ամբողջական մենագրություն է գրել Մեսրոպ Տեր-Մովսեսյանը Թիֆլիսում լույս տեսնող «Ազգագրական հանդեսում» (Թիֆլիս, 1907, XV, էջ 85-132, XVI, էջ 130-196): Այդ ուսումնասիրության համառոտ տարբերակները լույս են տեսել նաև ռուսերեն ու գերմաներեն, որոնք պարունակում են 25 շատ հետաքրքիր պատկերներ³:

Չվարթնոցի տաճարը կառուցվել է կաթողիկոս Ներսես Երրորդի ժամանակ (645-660), այն ավերվել է երկրաշարժից: Կառուցելով այս տաճարը՝ կաթողիկոսն առաջարկել է հայրապետական պթոռը տեղափոխել Դվինից Վաղարշապատ:

Չվարթնոցի տաճարն ավերվելուց հետո ծածկվել է հողով ու բուսականությամբ: 1893 Մեսրոպ Տեր-Մովսեսյանը էջմիածնի ձեմարանի աշակերտների հետ սկսում է որոշ պեղումներ: 1900-ին հայր Խաչիկը սկսում է առավել լուրջ պեղումներ, որոնք տևում են մինչև 1904-ը: Հետո նա հինգ տարի աքսորվել է, սակայն վերադառնալուց հետո առավել մեծ եռանդով վերսկսել է պեղումները: Ֆ. Մակլերն ասում է, որ այդ պեղումները դեռ շարունակվում են ու ճարտարապետ Թորոս Թորամանյանը պատրաստել է պեղումների պլանը, ներկայացրել եկեղեցու ու կաթողիկոսարանի վերակազմության մա-

1 Frédéric Macler, Rapport sur une mission scientifique..., էջ 53:

2 Նույն տեղում, էջ 81-88:

3 Նույն տեղում, էջ 82:

խագիծը, որն ըստ Ֆ. Մակլերի մի օր կիրատարակվի¹:

Ֆ. Մակլերը ներկայացնում է պատմական ականարկ Չվարթնոցի մասին: Չվարթնոցի շինարարության միակ ժշգրիտ վկայությունը հաղորդում է հայ պատմիչ Սեբեոսը, ըստ որի Չվարթնոց տաճարը կառուցվել է ի հիշատակ Գրիգոր Լուսավորչին երևացած տեսիլի: Հայագետն ըստ Բ. Պատկանյանի հրատարակած բնագրի մեջբերում է Սեբեոսի երկի հետևյալ հատվածը. «Յայնմ ժամանակի արկ ի միտս իւր կաթողիկոսն Հայոց Ներսէս շինել իւր բնակութիւն մերձ առ սուրբ եկեղեցեացն, որ ի Վաղարշապատ քաղաքին, ի վերայ ծանապարհին, յորում, ասեն ընդ առաջ եղև թագաւորն Տրդատ սրբոյն Գրիգորի: Շինեաց անդ և եկեղեցի մի յանուն երկնաւոր Չուարթնոցն, որոց երևեալ ի տեսեան սրբոյն Գրիգորի բազմութիւն երկնաւոր զաւրացն: Եւ շինեաց զեկեղեցին բարձր շինուածովք և չքնաղ զարմանալեաք, արժանի աստուածային պատուոյն, որում նուիրեացն: Աջ ջուր և եբեր զգետոյն և արկ ի գործ զամենայն վայրսն առապար, տնկեաց այգիս և ծառատունկս և շուրջանակի պատուարեաց զբնակութեամբն զեղեցկադիր յաւրինուածով բարձր պարսպաւ ի փառս Աստուծոյ»²:

Հայագետն ասում է, որ Թովմա Արծրունին, Հովհաննես Դրասխանակերտցին, Ստեփանոս Տարոնացին, Սամվել Անեցին, Մխիթար Այրիվանեցին, Վարդանը, Կիրակոս Գանձակեցին, այսինքն՝ մինչև 13-րդ դարը կարելի է գտնել Չվարթնոցի մասին հիշատակարաններ:

Տարբեր գիտնականներ և պատմիչներ Չվարթնոցի կառուցումը դնում են տարբեր թվերի: Մեսրոպ Տեր-Մովսեսյանի կարծիքով տաճարի կառուցումը տևել է 645-655 թթ., Սամվել Անեցու մոտ առկա է 654 թվականը, Մխիթար Այրիվանեցին դնում է 641: Ներսես կաթողիկոսը կառուցել է ևս երկու այլ եկեղեցիներ, մեկը՝ Խորվիրապինը, մյուսը՝ Դվինի եկեղեցին, որը կոչվել է սուրբ Սարգսի անունով:

1 Թորոս Թորամանյանը 1904-ին սկսել է Չվարթնոց տաճարի հետազոտությունը, դեկավարել Խաչիկ վարդապետի նախաձեռնած պեղումները, 1905-ին ավարտել Չվարթնոց եռաստիճան տաճարի վերակազմության նախագիծը՝ հայկական ժարտարապետության ուսումնասիրման բարձրագույն նվաճումը և հրատարակելով «Չվարթնոց եկեղեցին» (1905)¹ հիմք դնելով հայկական ժարտարապետական գիտական զբաղանդությանը: Եվրոպական գիտությունը, որը չէր ընդունում ինքնուրույն հայկական ժարտարապետության գոյությունը, շնորհիվ Թորամանյանի աշխատությունների՝ ծանայել է հին ժարտարապետության գոյությունը: 1913 թ. Թորամանյանը մասնակցել է Վիեննայի համալսարանի գիտական ճատաշրջանին և արվեստի լավագույն աշխատանքի համար արժանացել գլխավոր մրցանակին: Նրա ուղարկած 1000-ից ավելի գծագրերի ուսումնասիրությունների և այլ նյութերի հիման վրա Յու. Ստրժիգովսկին Վիեննայում 1918-ին հրատարակել է «Հայերի ժարտարապետությունը և Եվրոպան» գերմաներեն երկհատորյակը՝ առաջարկաճան մշելով Թորամանյանի մասնակցությունը (տե՛ս Ով ով է, Հայեր, Կենսագրական հանրագիտարան, հ. 1, Երևան, 2005, էջ 439-440):

2 Սեբեոս, Պատմութիւն, Աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 147:

Առաջին անգամ Հովհաննես Դրասխանակերտցին է վկայում, որ տաճարի չորս սյուների տակ պահպանվում են սուրբ Գրիգորի ոսկորները, իսկ գլուխը գտնվում է մի պահարանում (զգրոցում): Ասողիկ պատմիչը այս եկեղեցին կոչում է սուրբ Գրիգոր և ոչ՝ Զվարթնոց: Մովսես Կաղանկատվացու մոտ էլ առկա է հիշատակություն սուրբ Գրիգորի մասունքների վերաբերյալ: Փավստոս Բուզանդն ասում է, որ Գրիգոր Լուսավորիչը թաղված է Թորդան գյուղում՝ իր նախնիների գերեզմանոցում: Մովսես Խորենացին նշում է, որ մի ձգնավոր՝ Գառնիկ անունով, գտել է սուրբ Գրիգորի մասունքները, Ղազար Փարպեցին էլ է խոսում Գրիգոր Լուսավորչի մասունքների մասին: «Այնպես որ, - եզրակացնում է Ֆ. Մակլերը, - մինչև V դարի վերջը այդ մասունքների գոյության պաշտամունքը կար»¹:

Հայագետը փորձում է ձշտել Զվարթնոցի ավերման ժամանակը: Մեսրոպ Տեր-Մովսեսյանը գրում է, որ Մովսես Կաղանկատվացին տաճարի մասին խոսում է որպես կանգուն կառույցի:

Մակլերը հիշում է Թովմա Արծրունու պատմության մեջ եղած այն փաստը, ըստ որի Դվինի երկրաշարժից հետո Գևորգ Կաթողիկոսը Դվինի եկեղեցու ավերման պատճառով տեղափոխվում է սուրբ Գրիգոր վանքը, որը կառուցել էր Ներսեսը: Ուրեմն, IX դարում եկեղեցին դեռ կանգուն էր: Թովմա Արծրունու պատմությունը հասնում է մինչև 930 թվականը, և պատմիչը չի հիշատակում Զվարթնոցի ավերման մասին: Ենթադրվում է, որ Զվարթնոցի տաճարը ավերվել է 930-1000 թվականների ժամանակամիջոցում:

Մխիթար Այրիվանեցին հայտնում է, որ տաճարն ավերվել է տաճիկների կողմից, Կիրակոս Գանձակեցին կրկնում է նույնը: Սակայն Մեսրոպ Տեր-Մովսեսյանը համոզված է, որ տաճարն ավերվել է երկրաշարժից, որովհետև եթե այն կրոնական մոլեռանդության հետևանքով քանդեին մահմեդականները, ապա նույն ձակատաքին կարժանանային Էջմիածնի Մայր տաճարը, Հռիփսիմեն և մյուսները:

Ֆրեդերիկ Մակլերը ներկայացնում է նաև իր անձնական տպավորությունը Զվարթնոցից, ուր այցելել է կառքով: Զվարթնոցը գտնվում է Էջմիածնից 4-5 կիլոմետր հեռավորության վրա: Նրա մոտից բացվում է Արարատյան դաշտի հոյակապ տեսարանը, որի մեջ աչքի են ընկնում Էջմիածնի վանքը, Գայանե, Շողակաթ, Հռիփսիմե եկեղեցիները՝ թաղված կանաչի մեջ: Դաշտում երևում են նաև խաղողի այգիները:

Դաշտի մի կողմում բարձրանում է Ալազյազը, մյուս կողմում՝ Արարատը: Խաղողի այգիները հիշեցնում են Նոյի ժամանակները: Դաշտը ընկած է երկու Արարատների ստորոտում: Ֆ. Մակլերը ներկայացնում է Զվարթնոցի կաթողիկոսարանի ավերակների ֆոտոնկարները:

1 Frédéric Macler, Rapport sur une mission scientifique ... p. 84.

Ըստ Մեսրոպ Տեր-Մովսեսյանի «Ազգագրական հանդեսում» հրապարակված Չվարթնոցի վերականգնված պատկերի՝ հայագետը նկարագրում է տաճարը: Այն կլոր է, եռահարկ, չորս հսկա սյուներ, որոնցից դեռ մնացել են տպավորիչ կտորներ՝ դրանց շատ հետաքրքիր հատվածներ, պահել են զմբեթը: Ըստ ավերակների կարելի է ենթադրել, որ դրանցում եղել են հոգևորականների խցերը, ծառայողների և դպիրների բնակարանները, որոնք կազմում են և կաթողիկոսի տունը: Չվարթնոցում կա նաև տիպիկ հայկական արևի ժամացույց: Չվարթնոցում գտնվել են նաև արձանագրություններ, որոնք վերածնված են պրոֆեսորներ Ն. Մառի և Բարտոլոմյե կողմից:

Ֆ. Մակլերն առանձին խորագրի տակ ներկայացնում է կաթողիկոսի օծումը («Onction du catolicos»)¹:

Հայագետն ականատեսն է եղել 1909 թվականի օգոստոսի վերջին օրերից մինչև սեպտեմբերի սկիզբը տևած կաթողիկոսի օծման նախապատրաստական աշխատանքներին, որոնք տեղի են ունեցել Էջմիածնում: Դա եղել է մի մեծ տոն ոչ միայն Ռուսաստանի ու Պարսկաստանի հայերի, այլև հատկապես Թուրքիայի հայերի համար, որոնք ավելի քան 20 տարուց հետո իրավունք էին ստացել դուրս գալ իրենց գյուղերից և ազատորեն շարժվել դեպի Էջմիածին: Հայեր էին եկել Երզնկայից, Վանից, Էրզրումից ու այլ վայրերից: Նրանք հասել էին Կարս և այնտեղից երկաթուղով Ալեքսանդրապոլով հասել Էջմիածին: Վանքը ուխտավորների համար հյուրընկալ պայմաններ էր ստեղծել՝ տրամադրելով սենյակ և տաք թեյ:

Նա մանրամասն ներկայացնում է, թե ինչպես է ընտրվում Ամենայն Հայոց կաթողիկոսը:

Հենց որ կաթողիկոսը վախճանվում է, սինոդը հավաքվում է Էջմիածնում: Այն բաղկացած է 8 անդամից, որոնցից չորսը արքեպիսկոպոսներ ու եպիսկոպոսներ են և չորսը՝ վարդապետներ կամ վանահայրեր: Այս անդամները կաթողիկոսի թեկնածուն համաձայնեցնում են ռուսական ցարի հետ:

Ամեն մի թեմ իր երկու թեկնածուն է ուղարկում կաթողիկոսի ընտրության համար: Ուղարկվածներից մեկն աշխարհական էր, մյուսը՝ հոգևորական: Ընտրությանը մասնակցում է ցարի ներկայացուցիչը, որն ընտրելու իրավունք չուներ: Ընտրության առաջին օրն առանձնացնում էին չորս թեկնածուի, որոնց ընտրում էին եպիսկոպոսներից: Երկրորդ օրն այս չորսից ընտրում էին երկուսին, որոնցից մեկին հավանություն էր տվել ռուսական ցարը: Ցարի կողմից ընտրված թեկնածուին հաստատելուց հետո, վերջինս ուղիղ ցարի մոտ էր գնում և նրանից կոնդակ ստանում: Դրանով դեռ ընտրությունն ավարտված չէր, որովհետև դեռ չէր իրականացվել օծման արարողությունը: Այդ արարո-

1 Frédéric Macler, Rapport sur une mission scientifique ... p. 88.

դուրյալան ամենաքիչը մասնակցում էին տասներկու եպիսկոպոսներ ու արքեպիսկոպոսներ: Որպեսզի օծումը վավերական լիներ, պարտադիր էր, որ տասներկու հոգևորականները լինեին:

Գլխավորապես օծման ծեսը տեղի էր ունենում էջմիածնի Կաթողիկե եկեղեցում, և այն ուղեկցվում էր աղոթքներով ու ծիսական երգերով, հետո տասներկու արքեպիսկոպոսներից մեկը սուրբ մեռունը լցնում էր ընտրվածի գլխին, որը ծնկաչոք էր: Հետո նա վերցնում էր սուրբ էջմիածնի ամենաթանկ մասունքը՝ Գրիգոր Լուսավորչի աջ ձեռքը և դնում ընտրյալի գագաթին: Այս ամենից հետո ընտրվածն իսկապես համարվում էր կաթողիկոս: Նոր ընտրված կաթողիկոսը աղոթք էր կարդում, ուր հիշատակում էր իր անունը: Սակայն 1909 թ. սեպտեմբերի 26-ին ընտրվածը՝ Մատթեոս Երկրորդ Իզմիրլյանը, չի հետևել այդ կարգին:

Ֆ. Մակելերը նեկայացնում է Ամենայն Հայոց կաթողիկոս Մատթեոս Երկրորդի կենսագրությունը: Նա ծնվել է 1845-ի փետրվարի 12-ին Կոստանդնուպոլսում: Նրա անունը եղել է Սիմեոն, և նա դերձակի որդի էր: Իզմիրլյան ազգանունը նշանակում է նրա ծագումով Չմուռնիայից լինելը: Նա հաճախել է Կոստանդնուպոլսի հայկական դպրոցները մինչև 18 տարեկանը: Այնուհետև երկու տարի ուսուցչություն է արել: 1864-ին դարձել է սարկավազ, 1869-ին, 24 տարեկանում, արդեն վարդապետ էր: Սա նշանակում է դառնալ աստվածաբանության դոկտոր՝ չամուսնանալու իրավունքով:

Խրիմյանը, որը Կոստանդնուպոլսի պատրիարքն էր, նրան ընտրում է որպես քարտուղար: Հայագետը մանրամասն նկարագրում է Մատթեոս Երկրորդի կյանքի ընթացքը: 1886-ին նա առաջնորդում է Եգիպտոսի հայկական թեմը, ուր մնում է երեք տարի և առողջական վիճակի պատճառով նորից վերադառնում է Կոստանդնուպոլիս, ուր ընտրվում է կրոնական կոմիտեի անդամ:

1892 թ. մայիսի 5-ին Խրիմյանն ընտրվում է Ամենայն Հայոց կաթողիկոս: Նրա փոխարեն 1894 թ. դեկտեմբերի 7-ին Իզմիրլյանն ընտրվում է պատրիարք:

1896 թվականի հուլիսի 22-ի հայկական ջարդերից հետո Իզմիրլյանը հրաժարվում է իր պատրիարքական պաշտոնից. նրան աքսորում են Երուսաղեմ, ուր մնում է տասներկու տարի: 1908-ին նրան ներկայացնում են որպես կաթողիկոսական աթոռի առաջին հավակնորդ, և ռուսական ցարը հաստատում է նրան որպես կաթողիկոս: Օծումը տեղի է ունենում 1909-ի սեպտեմբերի 13/26-ին:

Ֆ. Մակելերը նշում է, որ Ռուսաստանում հայերն ունեն վեց եպիսկոպոսական թեմեր, որոնցից չորսն Անդրկովկասում են, իսկ երկուսը՝ կայսրության այլ մասերում: Պարսկաստանն ու Հնդկաստանը կազմում են երկու եպիսկոպոսական թեմեր: Այսպիսով, ութ եպիսկոպոսական իշխանություններ ուղիղ գծով պատկանում են էջմիածնում նստող հայոց կաթողիկոսին:

1) Շատ մեծ է Երևանի եպիսկոպոսական թեմը. նրանում մտնում են Երևանը, Կարսը, Ալեքսանդրապոլը, Կաղզվանը, Օլթին և այն բազմաթիվ գյուղերը, որոնք կան այդ տարածքում: Համարյա թե Ռուսահայաստանի հայության կեսը պատկանում է Երևանի թեմին:

2) Թիֆլիսի հայ եպիսկոպոսական իշխանության կենտրոնը Թիֆլիսն է՝ նրան պատկանող քաղաքներով ու գյուղերով, ինչպես նաև Քութաիսին ու Ելիզավետապոլի մահանգի մի մասը:

3) Շուշին Ղարաբաղի մայրաքաղաքն է Ելիզավետապոլի մահանգում: Այս թեմի մեջ է մտնում նաև Նուխին:

4) Շամախին, որում առաջին տեղ է զբաղում Բաքուն, ուր Շամախի երկրաշարժից հետո հավաքվել են այդ տարածքի հայերը: Դաշքեսանի գյուղերը պատկանում են այդ եպիսկոպոսական իշխանությանը:

5) Աստրախանի թեմը ընդգրկում է Հյուսիսային Կովկասը, Անդրկասպիան՝ Թուրքմենստանի հետ, որտեղ տարբեր քաղաքներում ապրում են հայեր: Այդ հատվածում հայկական գյուղեր չկան: Եպիսկոպոսական թեմի մեջ մտնում են Վոլգայի և ողջ Սիբիրի տարածքում ապրող հայերը:

6) Քիշինը, հնագույն Բեսարաբիայում ևս ունի հայկական եպիսկոպոսական իշխանություն: Այդ իշխանությանն ենթակա են Ղրիմը, Եվրոպական Ռուսաստանի հատվածները, մտավայրեր ունենալով Մոսկվայում, Սանկտ-Պետերբուրգում և Օդեսայում: Դրանի վրա գտնվող Նոր Նախիջևանը շատ կարևոր հայկական կենտրոն է՝ բազմաթիվ հայկական գյուղերով, որոնք բնակիչները եկել էին Ղրիմից:

Պարսկաստանում Ատրպատականի հայկական թեմն է, որի մեջ մտնում են հին Պարսկահայաստանի բնակավայրերը՝ Ուրմիա, Սալմաստ, Թավրիզ: Թավրիզը եպիսկոպոսական իշխանության մտավայրն է:

Պարսկաստանի մնացած մասի, Հնդկաստանի, Հնդկական արխիպելագի հայերը ենթարկվում են Ջուղայի եպիսկոպոսական իշխանությանը, որը գտնվում է Իսպահանի մոտ և այնտեղ կան բավականին թվով հայկական գյուղեր:

Թուրքահայաստանի և Փոքր Ասիայի հայերը, ինչպես մեծ կենտրոններում՝ Վանում, Մուշում, Բիթլիսում, Խարբերդում, Դիարբեքիում, Երզնկայում, Սիվայում, Տրապիզոնում և այլուր, ենթարկվում են Կոստանդնուպոլսին: Այդ եպիսկոպոսական իշխանությունն ունի 45 թեմ, որոնք պակաս մարդաշատ են՝ քան Ռուսաստանինը:

Երուսաղեմի պատրիարքը զբաղեցնում է մի առանձին դիրք: Նրան են պատկանում Սիրիայի և Կիպրոսի հայերը:

Կիլիկիան ունի իր կաթողիկոսը, որը մատնում է Սիս քաղաքում: Կրոնական առումով նա կախված է Էջմիածնի կաթողիկոսից, սակայն ինքն է ձեռնադրում իր եպիսկոպոսներին:

Հոգևոր առումով էջմիածնի պատրիարքը կրում է ծայրագույն պատրիարք և Ամենայն Հայոց կաթողիկոս անունը: Իսկ նրանից հետո գալիս է Կիլիկիայի կաթողիկոսը, որը կոչվում է կաթողիկոս տանն Կիլիկիո:

Աղթամարի կաթողիկոսը նստում է նույն անունը կրող կղզում: Նրա եպիսկոպոսական իշխանությունը տարածվում է լճի հարավային կողմում ապրող հայերի վրա: 1909-ին Աղթամարի կաթողիկոսական աթոռը, ինչպես վկայում է Ֆ. Մակելը, եղել է թափուր:

Թուրքիայում քաղաքական հարցերի առումով կարևոր է Կոստանդնուպոլսի պատրիարքությունը, նա ղեկավարվում էր մի համագումարով, որի մեջ մտնում էին հոգևորականներ ու աշխարհականներ, այն կոչվում էր Հայ ազգային միություն, որին Թուրքիայի կողմից տրված էին կազմակերպական իրավունքներ: Աբդուլ Համիդի վերջին տարիներին այդ միությունը երբեք նիստ չի գումարել:

Թուրքիայից դուրս, Եգիպտոսում կա հայ եպիսկոպոսական թեմ: Թեմ կա նաև Բուլղարիայում, որին ենթարկվում են Ռումինիայի ու Ավստրիայի հայերը: Մնացած ողջ Եվրոպայում այլևս հայկական թեմեր չկան, սակայն կան հայ եպիսկոպոսներ ու վարդապետներ:

Ամերիկայում Worcester-ում նստում է հայ եպիսկոպոս, որը կաթողիկոս ընտրելու իրավունք չունի:

Ֆրեդերիկ Մակելի այս տեղեկագիրը՝ հայ կրոնական համայնքների վերաբերյալ, ունի ծանաչողական մեծ արժեք ու իր մեջ պարունակում է հետաքրքիր փաստեր:

Հայագետի ուղեգրության մեջ մեծաթիվ են Թիֆլիսի հայերին վերաբերող բաժինները, որոնց հատկացված է առանձին հատված՝ «Թիֆլիսի հայերը» խորագրով: Այդ խորագրի տակ կան ենթաբաժիններ՝

- ա) Թիֆլիսի հայ բնակչությունը
- բ) Մամուլը Թիֆլիսում
- գ) Թիֆլիսի հայկական միությունները
- դ) Հայկական թատրոնը Թիֆլիսում

Գրքի այս հատվածն ունի ուղեգրության տարեթիվն ու ամսաթիվը՝ 20 սեպտեմբերի 1909 (20 septembre 1909): 1909-ին Թիֆլիսում բնակվում էր մոտավորապես 80.000 հայ: Շատ քչերն ունեին արևմտահայ ծագում, մոտ հազար բանվորներ եկած Թուրքիայից՝ փախած համիդյան կոտորածներից ու ապաստանած Թիֆլիսում: Թուրքական սահմանադրության հռչակումից հետո 25.000 հայ տեղափոխվեց Կովկաս: Նրանց տեղափոխումը կազմակերպել էր Կովկասի հայերի բարեգործական միությունը, որը նրանց բնակեցրեց Բաթու-

1 Նույն տեղում, էջ 94:

միում, Կարսում, Օլթիում, այսինքն՝ ողջ թուրքական սահմանի երկայնքով, լինի ծովային, թե ցամաքային:

«Չնայած,- մշում է Ֆ. Մակլերը,- Թիֆլիսը վրաց թագավորության մայրաքաղաքն է, բնակչության մեծ մասը հայեր են»¹: Վրաստանի քաղաքները բնակեցված են հայերով, այն դեպքում, երբ վրացիներն ապրում են գյուղերում: Ռուսական տիրապետության ժամանակ հայերը մեծ թիվ էին կազմում, և քաղաքապետարանի անդամների երեք քառորդը հայեր էին: Ողջ առևտուրը հայերի ձեռքում էր, ինչպես և տեղական արդյունաբերությունը:

Տեղական բանկային գործը նույնպես հայերի ձեռքին էր, բացի *վրաց ազնվականների բանկից*: Սանկտ-Պետերբուրգի ռուսական բանկային տները Թիֆլիսում բացել էին երկու բանկեր, որոնց մեջ կարևորը *Պետական բանկն էր*:

Թիֆլիս քաղաքի անշարժ գույքի, հողակտորների, այգիների մեծ մասը պատկանում էր հայերին²:

Ֆ. Մակլերը թվարկում է, թե ինչ մամուլ էր հրատարակվում Թիֆլիսում: 1909-ին լույս էին տեսնում վեց ռուսական թերթեր: «Кавказ»-ը տերունական թերթ էր, ամենօրյա էր «Тифлисский листок»-ը, որը շատ տարածված էր և գտնվում էր հայերի ձեռքին, «Закавказье»-ն պատկանում էր վրացիներին: Երկու ուրիշ թերթեր լույս էին տեսնում միայն երկուշաբթի և թվում էր, թե երկար կյանք չեն ունենալու: «Голос Кавказа» թերթը պատկանում էր ռուսներին:

Հայագետը թվարկում է նաև հայերեն պարբերական մամուլը: Ամենօրյա թերթեր էին «*Մշակը*»՝ ստեղծված 1872-ին, և «*Հորիզոնը*»: «*Սուրհանդակը*» լույս էր տեսնում միայն երկուշաբթի օրերը: «*Հովիվը*» շաբաթաթերթ էր, «*Գյուղատնտեսը*» զբաղվում էր գյուղատնտեսական խնդիրներով, «*Խաթաբալան*» երգիծական էր ու նկարագարող:

Լույս էին տեսնում նաև ամսական պարբերականներ՝ «*Տարազը*», նկարագրոված ամսագրեր էին «*Հասկերը*», «*Աղբյուրը*», որոնք մամուլների ու պատանիների համար էին: «*Լուման*» գրական էր և լույս էր տեսնում երկու ամիսը մեկ: Տարեկան երկու անգամ լույս էր տեսնում «*Ազգագրական հանդեսը*», որի խմբագիր Լալայանն այն նմանեցրել էր եվրոպական հրատարակումներին:

Վրացերենով կային երկու օրաթերթ, մի երգիծական շաբաթաթերթ և երկու ամսաթերթ:

Շատ տարածված էր թաթարերեն լույս տեսնող «*Մուլա Նասրեդին*»-ը, որը նկարագարող շաբաթաթերթ էր:

Վերջապես գերմաներեն «*Kaukasische Post*»-ը, որը շաբաթաթերթ էր և լույս էր տեսնում խիստ անկանոն:

1 Նույն տեղում:

2 Նույն տեղում:

Թիֆլիսից դուրս վրացիները թերթ ունեին Քուբախիում: Հայերը հրատարակում էին կրոնական ու գիտական ամսագիր «Արարատը»՝ էջմիածնում, պարբերականներ՝ Ալեքսանդրապոլում, Բաքվում ու Երևանում: Թաթարները երկու օրաթերթ էին տպագրում Բաքվում, որը Կովկասի մահմեդականների կենտրոնն էր: Նույն քաղաքում հայերը հրատարակում էին ռուսերենով «Եսկյ» թերթը:

Ֆ. Մակլերը ներկայացնում է Կովկասի հայ բարեգործական միության գործունեությունը: 1) Այն դրամով ու անշարժ գույքով ուներ 250.000 ռուբլի և տարեկան բյուջեն 30.000-ից 40.000 ռուբլի է: Միությունն ուներ մի որբանոց և մի մեծ գրադարան՝ ընդարձակ ընթերցասրահով: Այն նյութապես օգնում էր զավառական տարրական հիսուն դպրոցների և ծաշով կերակրում էր 200 աղքատ աշակերտների:

2) Հայ տիկնանց բարեգործական միությունն ուներ մի մասնագիտական դպրոց՝ աղքատ երիտասարդ օրիորդների համար, որն ուներ տարեկան շուրջ 15.000 ռուբլի կազմող բյուջե:

3) Հայ դրամատիկ միությունը, որի նպատակն էր նյութապես օգնել թատրոնին ու նրա հայ դերասաններին:

4) Հայ ազգագրական ընկերությունը, որն իր օրգան «Ազգագրական հանդեսում» տպագրում էր հետաքրքիր հոդվածներ ազգագրությունից, ժողովրդական բանահյուսությունից, կովկասյան տարածաշրջանում կատարված հնագիտական պեղումներից:

Հիշատակելի են նաև հայկական ուրիշ միություններ, որոնք ևս կարևոր գործեր էին կատարում: Մեկը զբաղվում էր հայ որբերի կրթության, մեկ ուրիշը՝ հայ աղքատ կանանց համար աշխատանք հայթայթելու խնդիրներով, մի երրորդը օգնում էր հայ չքավոր ուսանողներին:

Ֆրեդերիկ Մակլերի տեղեկագրության ամենակարևոր հատվածը Թիֆլիսի հայ թատրոնին նվիրվածն է, որում բացառիկ փաստեր կան հայ նոր թատրոնի հիմնադիր Գաբրիել Սունդուկյանի մասին, որին հայագետը հանդիպել է Թիֆլիսում ու շատ տպավորիչ երկար զրույցի բռնվել ֆրանսերենով, որին Սունդուկյանը տիրապետում էր կատարելապես:

Ֆ. Մակլերը նշում է, որ Թիֆլիսի հայկական թատրոնը հատուկ շննք չուներ: Տողատակում նշում է, որ Թիֆլիսի հայ ազգային թատրոնի շենքը հիմնված է «Մշակի» հրատարակիչ Գրիգոր Արծրունու կողմից, վաճառվել է ու դարձել վրացական թատրոն: Շուշին ունեցել է հայ թատրոնի շենք, որն այրվել է 1906-ին թուրքերի կողմից և այլևս չի վերականգնվել: Թիֆլիսի թատրոնի շենքերից մեկը պատկանում է հայ վաճառատներից մեկին ու նրանում տարբեր ազգերի թատերական խմբեր ներկայացումներ են տալիս՝ հատկապես ռուս դերասաններ, իսկ շաբաթը մեկ անգամ՝ հայերը:

Թիֆլիսում հաշվում են երեք թատերախմբեր: Մեկը Թիֆլիսիցն է, մյուսը՝ Բաքվիցը, երրորդը շրջում է Կովկասում ու Ռուսաստանում: Հայկական խմբերը ներկայացումներ են բերմադրում Թիֆլիսի տարբեր թատրոններում:

Հայագետը մշում է, որ Թուրքիայում սահմանադրություն ընդունելուց հետո Բաքվի հայ դերասանների խումբը կազմակերպում էր շրջագայություն Թուրքիայում՝ սկսելով Էրզրումից: Նրանք հանդես են գալիս Կոստանդնուպոլսում և Փոքր Ասիայի ներսում: Քանի որ Թուրքիայի հայերը ավելի քան քսան տարի ազգային բեմադրություններ ունեին, այս խումբն ամենուրեք գտնում է հիացական ընդունելություն, հատկապես Կոստանդնուպոլսում, ուր նրան ծափահարում են ամենից շատ: Այդ խումբը բեմադրում էր և՛ հայ հեղինակների, և՛ ֆրանսիացի, գերմանացի, ռուս գրողների թարգմանություններ:

Ֆ. Մակլերը նկատում է, որ Արևելյան Հայաստանի՝ 1828 թվականին Պարսկաստանից զատվելն ու Ռուսաստանին միանալը հայերի համար բացում է մի նոր ժամանակահատված: Եվրոպան սկսում է ծանոթանալ հայ գրականության այնպիսի գրողների հետ, ինչպիսիք են Խ. Աբովյանը, Ստ. Նազարյանցը, Բաֆֆին, Պռոշյանը, Գամառ-Քաթիպան, Մուրացանը, Աղայանը, Շիրվանզադեն և ուրիշներ: Նա մշում է, որ բացի վերջին երկուսից, բոլոր մյուս գրողներն արդեն վախճանված են, սակայն թողել են տևական գրականություն, որով մի նոր աստիճանի են բարձրացրել իրենց հայեանակիցների բարոյական ու մտավոր հնարավորությունները: Նրանք իրենց ստեղծագործություններով հայ նոր գրականության մեջ բացել են նոր ժամանակահատված:

Ուշագրավ է, որ Ֆ. Մակլերը որոշ մանրամասներ է հաղորդում Շիրվանզադեի մասին, օգտվելով Serge d'Hériminy (Paris, 1909) կատարած «Արտիստի» թարգմանությանը կցված առաջաբանից, ուր ասվում է. «Շիրվանզադեն, նրա իսկական անունը Ալեքսանդր Մովսիսյան, ժամանակակից Հայաստանի ամենանշանավոր գրողն է՝ հազիվ 50 տարեկան: Նա արդեն իր երկրին է տվել ավելի քան երեսուհինգ երկեր՝ վեպեր ու դրամատիկ գործեր: Նա ծնվել է Շամախիում՝ Ռուսահայաստանի կարևոր քաղաքներից մեկում: Տասը տարուց ավելի պակաս ժամանակահատվածում նա հրատարակել է մեծ թվով տպավորիչ վեպեր, որոնցից են «Արսեն Դիմաքսյան», «Ցավագարը» և «Քաոս», որոնք ունեն մեծ համբավ: Բայց ամենատպավորիչը, որպես ամենակարևոր այս շարքում, «Քաոսն է», շատ ծավալուն մի վեպ՝ քաղված Բաքվի ամենօրյա կյանքից: Նրա դրամաները՝ «Եվգինե», «Ունե՛ր իրավունք», «Արմենուհի», ուսումնասիրում են կնոջ վիճակը արդի հասարակության մեջ: «Ավերակների վրա», «Պատվի համար» դրամաները ներկայացնում են հայ կապիտալիստների կենցաղն ու սովորությունները...»¹:

1 Նույն տեղում, էջ 98:

Հայ բանաստեղծներից Ֆ. Մակլերը հիշատակում է Գամառ-Քաթիպային (Ռ. Պատկանյանի կեղծանունը), Հովհաննես Հովհաննիսյանին, Հովհաննես Թումանյանին, Ավետիք Իսահակյանին, Ալեքսանդր Ծատուրյանին, Շուշանիկ Կուրդինյանին:

Նրա կարծիքով Բաֆֆին ստեղծել է արձակի դպրոց, որին հետևել են Շիրվանզադեն, Ավետիս Ահարոնյանը, Վրթանես Փափազյանը, Լեոն, Ատրպետը, Նար-Դոսը և ուրիշներ: Այս գրողները մեծ մասամբ իրենց առաջին գործերը հանձնել են «Մշակ»-ին, որից հետո տպագրել են առանձին հատորով:

Դրամատուրգներից Շիրվանզադեն հայ կյանքից քաղված դեպքերը ներկայացնում է եվրոպական ձևով:

Նա հատուկ կանգ է առնում Գաբրիել Սունդուկյանի ստեղծագործությանն ու մարդկային նկարագրի վրա, որին անվանում է Կովկասի հայ թատրոնի հայրը: Ֆ. Մակլերն այցելում է հարգված ծերունի դրամատուրգին, որն աշխատում էր նոր կատարված Ադանայի կոտորածները ներկայացնող գործի վրա:

Նշանավոր վարպետը հաժույթով պատմում է իր հեռավոր երիտասարդության մասին, և ինքը գրում է ըստ նրա ասածի¹: Սունդուկյանն ասում է. «Ես ծնվել եմ Թիֆլիսում 1825-ի հունիսի 29-ին: Կրթությունը սկսել եմ Շահան Ջրպետի մոտ, որ ապրում էր մեր տանը: Իմ մայրը՝ արդեն այրի, կրթությունս հանձնեց Ջրպետին ու նրա կնոջը 1832-ի ապրիլի 7-ին: Ես անցկացրի մանկությունս նրանց մոտ ավելի քան վեց տարի՝ առավոտից մինչև երեկո: Պարոն Ջրպետը պարապում էր ինձ հետ հայերեն ու ֆրանսերեն, ավելի ուշ՝ լատիներեն ու իտալերեն: Նրա կինը, ծնված Դենիզ-Մարգարետ Վոնլաթյուն, բնիկ ֆրանսուհի և փարիզուհի, սովորեցնում էր միմիայն ֆրանսերեն: Ես դեռ հիշում եմ այն պահերը, երբ նստած նրա աջից, սովորում էի կարդալ B.L.A. = B.L.A.: Նա այնքան էր պատմել ինձ Փարիզի մասին, որ երբ 1878-ին ես երջակություն ունեցա տեխնիկայի փառահեղ քաղաքը ու նրա տեսարժան վայրերը, ինձ թվաց, թե շատ բաներ ինձ ծանոթ էին, որոնք, սակայն, տեսնում էի առաջին անգամ: Այդ ամենով հանդերձ ես զարմացած էի այդ համաշխարհային քաղաքի գեղեցկությունից ու հոյակապությունից: **Փարիզ հասնելու հենց առաջին օրը ես բարձրացա դեպի «Հաղթական կամար» և Վանդոմի սյունը²**, մեկնելու նախընթաց օրը իմ մնաս բարովն ասացի Փարիզին՝ Սեն

1 Նույն տեղում, էջ 99:

2 Գաբրիել Սունդուկյանի պատմածի այս հատվածը փոքր-ինչ կրճատումներով զետեղված է Ա. Քալանթարյանի «Հանդիպումներ Գ. Սունդուկյանի հետ» հրապարակման մեջ, որում տեղ են գտել որոշ անձնություններ: Մեր կողմից ընդգծած տողը թարգմանված է. «**Հենց իմ Պարիզ գնալու օրը ես բարձրացա Հաղթանակի կամարի և Վանդոմի աշտարակի վրա**»: Հայտնի է, որ ոչ ոք չի կարող բարձրանալ ոչ Հաղթական կամարի և առավել ևս Վանդոմ հրապարակի կենտրոնում գտնվող սյան վրա - Ա. Դ. (տե՛ս ժամանակակիցները Գաբրիել Սունդուկյանի մասին, Երևան, 1976, էջ 177):

ժառ անտարակի բարձրությունից: Ֆրանսիացիներն որքան երջանիկ պետք է լինեն Փարիզն իրենց պատկանելու և իրենց քաղաքակրթությունը պանծացնելու համար...:

Պարոն Ջրպետի մահից հետո, որ տեղի ունեցավ Թիֆլիսում 1838-ի օգոստոսի 16-ին 70 տարեկանում, ես շարունակեցի ուսումնս Արզանով եղբայրների պանսիոնում, հետո այդ ժամանակ Թիֆլիսում գտնվող միակ ռուսական գիմնազիայում և վերջապես Սանկտ-Պետերբուրգի համալսարանում, ուր ավարտեցի ուսումնս 1850-ին:

Պետերբուրգում չորս տարվա ընթացքում (1846-1850) ես հաճախում էի ռուսական ու ֆրանսիական թատրոնները՝ ավելի հաճախ վերջինս: Ռուս դերասաններ Կարատիզինը, Մարտինովը, Մաչալովը և ֆրանսիացիներ տիկին Արնոլդ-Պլեսին, Ալանը, Բերտոնը և ուրիշ հայտնիներ ինձ սովորեցրին սիրել թատրոնը: Մոլիերը, Շեքսպիրը, Շիլլերը (ֆրանսերեն թարգմանությամբ) պաշտելի հեղինակներ են ինձ համար:

1863-ին ես գրեցի իմ առաջին պիեսը՝ մի վոդևիլ: Նրա հաջողությունը ինձ խրախուսեց աշխատել թատրոնի համար:

Ես երբեք չեմ մոռանա այն պահերը, որոնց ժամանակ ներկա եղա «Fourchambauld»-ի 54-րդ ներկայացմանը 1878-ին Փարիզի թատրոնում, ուր տեսա տիկին Ագարին, պարոն Զոկելինին և ուրիշների...:

Իմ նոր պիեսը կոչվում է «Սեր և Ազատություն», եթե այն խաղացվի, և հասությամբ լավ լինի, արդյունքը կօգտագործվի Ադանայի կոտորածից փրկվածներին օգնելու համար:

Այս պիեսի սյուժեն ամփոփում է իմ խոհերը բաժանության վերաբերյալ: Մեր օրենքները շատ խիստ են այդ հարցի նկատմամբ: Ես անում եմ ամեն ինչ օգնելու ամուսնության մեջ դժբախտ կանանց: Ես շատ ուրախ կլինեմ, եթե այդ պիեսը հաջողություն ունենա...»¹:

Ֆ.Մակլերն ասում է, որ այդպես է խոսել պատվելի վարպետը և արցունքի մի կաթիլ անցած երիտասարդության համար գլորվեց նա աչքից՝ սիրելի Ֆրանսիայի, Փարիզում Կենդանի արևելյան լեզուների ամբիոնը հիմնած իր առաջին ուսուցչի՝ Ջրպետի համար:

Նա հայագետին է հանձնում իր այցեքարտը, որի վրա ֆրանսիական ձևով գրված էր՝ Գաբրիել Սունդուկյան:

Ֆ. Մակլերը տեղյակ է պահում, որ «Սեր և Ազատություն» պիեսը Թիֆլիսում բեմադրվել է 1909-ի նոյեմբերի 24-ին, իսկ պիեսի բնագիրը տպագրվել է «Մշակի» 259-ից 262 համարներում: Նա պատմում է պիեսի բովանդակությունը՝ նշելով, որ այն ունի հինգ գործողություն, գրված է Թիֆլիսի բարբառով

1 Նույն տեղում, էջ 100:

և սյուժեն քաղված է Թիֆլիսի կյանքից: Հայագետը նշում է, որ այս պիեսում շոշափված հարցերը և նրանում գործող կերպարները յուրօրինակ շարունակությունն են այն մեծ խնդիրների, որոնք կան «Քանդած օջախ», «Պեսպո», «Խաթաբալա» և այլ գործերում:

Թատերասեր հասարակությունը սիրով է ընդունել պիեսը, հատկապես երրորդ գործողությունը: Իսկ հեղինակը հաճույք է ստացել այդ ջերմ ընդունելությունից:

«Թիֆլիսից դեպի Կոստանդնուպոլիս» բաժնում Ֆ. Մակլերը գրում է. «ես մեկնեցի Թիֆլիսից՝ Ռուսաստանի հայերի մայրաքաղաքից, դեպի Կոստանդնուպոլիս՝ Թուրքիայի հայերի մայրաքաղաքը, երկաթուղու ճանապարհով մինչև Բաթումի, և ծովով մինչև վերջին նավահանգիստը՝ Կոստանդնուպոլիս»¹: Բաթումին ներկայացնում է որպես մի ծաղկուն ու գեղեցիկ քաղաք՝ ծառերով եզերված լայն պողոտաներով, գրեթե վիթխարի կառույցներով: Այդ քաղաքում ապրում են 3.500 հայեր, որոնց երկու երրորդը լուսավորչականներ էին, իսկ մեկ երրորդը՝ կաթոլիկներ: Այդ երկու համայնքներից յուրաքանչյուրն ունի իր եկեղեցին ու դպրոցը: Բաթումիի հայերն անշարժ գույքի տերեր են, նավթի վաճառականներ, առևտրականներ, ֆաբրիկայի բանվորներ: Այնուհետև նա խոսում է Տրապիզոնի և մի շարք այլ ծովափնյա քաղաքների հայ բնակչության մասին:

Մեծարժեք է նաև «Կոստանդնուպոլսի հայերը» բաժինը²: Կոստանդնուպոլսի հայերի մասին տեղեկությունները հեղինակը թվագրում է՝ 15 հոկտեմբերի 1909 թ.: Սկզբում հայագետը խոսում է այն մասին, թե ինչպիսի հայեր են ապրում Կոստանդնուպոլսում: Նա այնտեղ բնակվող հայերին բաժանում է երեք խմբի: Առաջին խումբը ստամբուլցիներն են, որոնց բազում սերունդներ արդեն ապրում են մայրաքաղաքում և խոսում են մի հայերենով, որին խառնված են թուրքերեն բառեր: Երկրորդ խումբը կազմում են գավառացիները, որոնք իրենց ընտանիքներով եկել են հայկական տարբեր կենտրոններից՝ Փոքր Ասիայից և Մեծ Հայքից: Այդ հայերը խոսում են հայերենի տարբեր բարբառներով: Նրանց մեջ շատ են այնպիսիները, որոնք Կեսարիայից, Անգորայից, Պոլսայից են և մեծ մասամբ խոսում են թուրքերեն: Իսկ երրորդ խումբը երիտասարդներ են, որոնք եկել են Կոստանդնուպոլիս աշխատելու որպես բեռնակիր, հող կրող, որմնադիր, ծառա, մարմնավաստակ, բանվոր, արհեստավոր, նաև մանր առևտրական: Նրանք մեծ մասամբ վերադառնում էին հայերենի բնակավայր մի քանի տարի աշխատելուց հետո՝ տանելով իրենց որոշ վաստակը: Կան նաև այնպիսիները, որոնք մի քանի ամսով վերադառնում էին, այցելում իրենց ընտանիքներին և նորից վերադառնում: 1895-1896 թթ.

1 Նույն տեղում, էջ 102:

2 Նույն տեղում, էջ 105-124:

հայերի մարտիրոսացման մռայլ տարիներից հետո, կոտորածներից խուսափելու համար ավելի շատ հայեր տեղափոխվեցին Կոստանդնուպոլիս: Այդ նույն ջարդերը նպաստեցին, որ շատ հայեր լքեն Թուրքիան:

Մինչև 1890 թվականը հայերը Թուրքիայի կառավարման գործում շատ քիչ մասնակցություն ունեին: Նրանք զբաղվում էին բժշկությամբ, զինվորական դեղագործությամբ: Քաղաքական նոր փոփոխությունները հնարավորություն տվեցին մոտ հիսուն հայի ունենալու ոչ բարձր կառավարական աշխատանքներ:

Մի հայ հասարակական աշխատանքի նախարարն է, մեկ ուրիշը արտաքին գործերի նախարարության մեջ դերատեսնադպիր է: Ֆինանսների և գյուղատնտեսության նախարարությունները ունեն մեկ կամ երկու բարձրաստիճան հայ պաշտոնյաներ: Մի քանի հայեր կան վճռաբեկ ատյանում և մի քանիսն էլ դիրք են գրավում գավառներում: Թուրքիայի պառլամենտում կան երեք սենատոր հայեր, իսկ ինը պատգամավոր է: Քաղաքի գլխավոր խորհըրդում հայերը 100-ից 5-ն են:

Արդուլ Համիդի ժամանակ հայերը լրիվ իրավագուրկ էին: Ֆ. Մակլերն ասում է, որ 1909-ին մոտավոր հաշվումներով 400-ից 500 հայեր բավականին առաջադիմել են իրենց զբաղեցրած դիրքով:

Հայագետը ներկայացնում է, որ թուրքերը հայերին տեղ չեն տալիս նաև բանկային գործում ու խոշոր առևտրի և արդյունաբերության մեջ: Հայերն ունեն փոքրիկ արհեստանոցներ, գորգի գործով են զբաղվում, ունեն տպարաններ, ոսկերչական և զարդերի արհեստանոցներ:

Հայագետը փաստում է, որ Կոստանդնուպոլսի գրական ու մշակութային կյանքում հայերն առաջ են անցել ոչ միայն թուրքերից, այլև Կոստանդնուպոլսի մյուս ազգերից: Նրանք եռանդուն ձևով թարգմանում են ֆրանսիական, անգլիական, իտալական, ռուսական գրականությունից առանձին երկեր:

Նա բերում է հայ պարբերական մամուլի ցանկը, որը ներկայացնում է Կոստանդնուպոլսում հրատարակվող մամուլի 1909 թվականի հոկտեմբերի 15-ի իրական պատկերը:

1) «Բյուզանդիոն» (1856 նոյեմբեր) - Ամենօրյա, քաղաքական, գրական, գիտական, տնտեսական:

2) «Հայրենիք» (1909 հուլիս) - Ամենօրյա, քաղաքական, գրական, գիտական, տնտեսական: Հիմնվել է 1870-ին, արգելված 1889-1890, արգելված վերստին 1895-ին:

3) «Ազատամարտ» (1909 մայիս) - Ամենօրյա, քաղաքական, գրական, սոցիոլոգիական. «Դաշնակցության» օրգանը:

4) «Ժամանակ» (1908 նոյեմբեր) - Ամենօրյա, քաղաքական, գրական:

5) «Առավոտ» (1909 հոկտեմբեր) - Ամենօրյա, քաղաքական և երգիծական:

6) «Գավրոշ» (1908 սեպտեմբեր) - Ամենոյա և երգիծական:

7) «Djeridei – Charkie» (1877) - Ամենոյա և քաղաքական (թուրքերեն և հայերեն խոյամբ):

8) «Medjmouraï – ahbar» (1880) - Շաբաթը երկու անգամ, քաղաքական (թուրքերեն և հայերեն խոյամբ):

9) «Ծիածան» (1909 հուլիս) - Շաբաթաթերթ, քաղաքական:

10) «Կոհակ» (1909 մայիս) - Շաբաթաթերթ, քաղաքական:

11) «Ազդակ» (1908 դեկտեմբեր) - Շաբաթաթերթ, քաղաքական:

12) «Չայն հայրենյաց» (1908 դեկտեմբեր) - Շաբաթաթերթ, քաղաքական:

13) «Սասուն» (1909 մարտ) - Ամսական, գրական:

14) «Ավետաբեր» (1880) - Կրոնական, շաբաթական, տպագրվում է Ամերիկայի արտասահմանյան միսիոներների կողմից¹: Հայագետը թվարկում է նաև «Արևելքը», «Սուրհանդակը» և գրական հանդեսներ «Ծաղիկը», «Մասիսը», «Լուսը», «Բյուրականը»: Նկատում է, որ «Արևելքն» իր հրատարակումը վերսկսել է 1909-ի դեկտեմբերին: Հետո նա խոսում է Կոստանդնուպոլսում գործող հայկական միությունների մասին: Դրանք երեքն են: 1) Հայերի միաբանության, 2) Դպրոցի բարեկամների, 3) Հայ ազգին նվիրված տիկնանց:

Ֆ.Սակլերի գրքի այս հատվածն ունի «Հայ թատրոնը Կոստանդնուպոլսում» («Le théâtre Arménien à Constantinople») խորագիրը²:

Նա նկատում է, որ սկսած 1894-ից գրաքննությունն արգելել է հայ թատրոնն ու նրա ներկայացումները և Կոստանդնուպոլսում, և՛ գավառներում: Մինչ այդ գոյություն ունեցող թատերախմբերից միայն մեկն է գոյատևել՝ Մինակյանի խումբը, որը բեմադրում էր թուրքերենով:

Գրաքննության վերացումից հետո Մինակյանի խումբը փորձում է լեզվով էլ դառնալ հայկական: Ներկայացումները, որ նա բեմադրում էր, քաղված էին հայ ազգային պատմությունից, ինչպես «Արշակ Երկրորդը», «Անկումն Արշակունիների հարստության», բոլորովին հաջողություն չունեցան:

Մի երիտասարդ հայ՝ Վահրամ Փափազյանը, հենց նույն ժամանակ ձևավորում է մի նոր խումբ՝ բաղկացած երիտասարդներից, որոնք բնավ բեմարվեստի փորձ չունեին, այդ խումբը նույնպես պատմական պիեսներ է բեմադրում և որոշ պիեսներ Շեքսպիրից:

Կոստանդնուպոլսի կյանքում իսկական հայտնություն է դառնում Բաքվից Կոստանդնուպոլիս եկած Արմենյան-Աբելյան խումբը, որը ներկայացնում է ժամանակակից պիեսներ ռուս, գերմանացի, ֆրանսիացի հեղինակներից: Բեմադրում է նաև հայ դրամատուրգներ Պարոնյանի ու Շիրվանզադեի պիես-

1 Նույն տեղում, էջ 110-111:

2 Նույն տեղում, էջ 113:

ները: Հայերեն թարգմանված Ձուդերմանի և Իքսենի գործերը ևս ոգևորեցին Կոստանդնուպոլսի թատերասերներին: Այս իրադարձությունից հետո Կոստանդնուպոլսում ձևավորվեց մի նոր խումբ Ձարիֆյանի գլխավորությամբ, որի մեջ միահյուսվեցին Թուրքահայաստանի ու Ռուսահայաստանի թատերական արվեստի տարրերը:

Ֆ. Մակլերի գիրքն ավարտվում է Կոստանդնուպոլսի մոտ գտնվող Անտոնյան գրադարանի «Թարգմանիչք» Ավետարանի նկարագրությամբ:

Նշանավոր ֆրանսիացի հայագետը փորձում է անկողմնակալ ներկայացնել մշակութային, գրական, հոգևոր, նյութական այն արժեքները, որոնք հայ ժողովուրդն ուներ Ռուսահայաստանում և Թուրքահայաստանում 1909 թվականին: Նրա գիրքը հետաքրքիր է և՛ գրական, և՛ մշակութային, և՛ քաղաքական, և՛ տնտեսական առումով: Նրանում ներկայացված փաստերը պերճախոս վկայում են, որ անգամ առանց պետականության, օտարի լծի տակ, հայ ժողովուրդը շարունակել է իր ստեղծագործ կյանքը՝ շենացնելով ուրիշ ժողովուրդներին մեծ նպաստ բերող ստեղծագործ նվաճումներով: